ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-25/103 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով թատրոնի բեմի ձայնային համակարգի (Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.09.2025թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Մկրտչյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ	Արման Երանոսյան /գնահատող/
	Ցոլակ Հակոբյան /գնահատող/
	Անահիտ Հակոբյան /բացող/
	Էլեն Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-25/103 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-25/103 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային հասցե
1	«Վամար Գրուպ» ՍՊԸ	tender.companion@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գնման գինը ՀՀ դրամ	Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
			Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	«Վամար Գրուպ» ՍՊԸ	43916000	34983300	41979960

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2025թ սեպտեմբերի 16-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.09.2025թ. ժամը 11:00-ին

Բացակայում էր Անահիտ Հակոբյանը

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Վամար Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակցի վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից **«Վամար Գրուպ» ՍՊԸ-ին** ճանաչել **1-ին տեղ** զբաղեցրած՝ ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին.

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Արման Երանոսյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Էլեն Ստեփանյան

_____ Արմինե Սահակյան /քարտուղար/